46(1321). ԹԸՇՇԱՆ[1] (նիաթի համար)

Որ էրեխեն նիաթի ա կյանի, ճուրն ածում ենք ամանը ու մի իրեք-չորս հատ անծող քցում մեչը, ասում. «աչկերըտ տըրաքի, աչկերըտ տըրաքի», ում աչկերը ըրեխին կպել ա, աչկերը տըրաքի: Ու ըրեխի օրորոցի կըշտովը կամ թե չէ շորի վրովը ճուրը շաղ ենք տալի: Էտ էլ տիե ա ըլըմ:

Դ. ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

47(1322). ԿՅԱՌԻ ՔՑԵԼ

Վերցնում են յոթ հատիկ, վեցը՝ գարի, մեկը՝ ցորեն: Գարու հատիկներից մեկը պետք է սև լինի, իսկ մեկի կեսը՝ կտրված: Ցորենը նշանակում է բարի բախտ, սև գարին՝ վատ բախտ, իսկ կիսված գարեհատը խորհրդանշում է այն անձնավորությանը, ում համար գուշակությունը կատարվում է: Գուշակողը ձախ ձեռքի ափը փաթաթում է մի սև շորով, որի ծայրերը լավ ձգում է այնպես, որ ստացվում է հարթ ափ և աջ ձեռքով ձգում է գարու հատիկները ձախ ձեռքի ափին ու դրանց գրաված դիրքով գուշակում է: Եթե սև գարու հատիկն ընկնում է գուշակվողին խորհրդանշող գարու հատիկից հետո, ուրեմն տվյալ անձնավորության բախտը սև է, իսկ եթե ցորենի հատիկն ընկնում է գուշակվողի գարու հատիկից առաջ, ուրեմն՝ բախտը բարի է:

[1] Թշշան անել- փայտի այրվող, շիկացած կտորները գցում են ջրի մեջ, որտեղ դրանք թշշոցով հանգչում են, այստեղից էլ՝ «թշշան անել» արտահայտությունը (ծանոթ. բանահավաքի):